# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**02 հուլիսի 2013 թվականի N 54-Ա**

**ք. Հրազդան**

## Ա. ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Սոլակի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Ասյա Մելքումյանին*** տրամադրել 2013 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2013 թվականի հուլիսի 18-ից մինչև օգոստոսի 14-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

Հիմք՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 628-Ա որոշման 1-ին կետով հաստատված ժամանակացույցը:

2. *Ասյա Մելքումյանի* արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Սոլակի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի լիազորությունների կատարումը ժամանակավորապես դնել ընկերության հաշվապահ՝ ***Գայանե Բաբայանի***, իսկ բնակչության բժշկական սպասարկումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ՝ *Գարնիկ Բաբայանի* վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ